



Ա Ր Ա Պ Ա Տ Ա Տ

ԹԻՒ ԺԱ. — ՇՐՋԱՆ ԽԱ. 1888 ՏԱՐԻ ԽԱ. ՆՈՅԵՄ. 30

ԿՐՈՆԱԿԱՆ

ՊԼՈՐՄԱՆ ՍԵՐԵՐՈՑԻ

(Ղ. մաս Ճ. 25—38)

Եւ ահա յարեաւ ոմն օրինական՝ փորձէր զնտ և ասէր. Վարդապետ, զի՞ն գործեցից՝ զի զկեանս յաւ իտենտականս ժառանգեցից. Եւ նա ասէ ցնա, յօրէնո զի՞ն, զքեալ է, որպէս ընթեռնուս. Նա պատասխանի ետ և ասէ, սիրեսցես զծէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, յամենայն անձնէ քումմէ. և յամենայն զօրութենէ քու մմէ, և յամենայն մսաց քոց, և զընկեր

քո իբրև զանձն քու Եւասէ ցնա ուղիղ ետուր զալատասիանիդ, զայդ արա և կեցցես: Նա իբրև կամեցաւ զանձն արդարացուցանել՝ ասէ ցՅիսուս. և ով է իմ ընկեր: Պատասխանի ետ Յիսուս և ասէ. այր մի իջանէր յՆրուսաղեմէ յԵրիքով, և անկաւ ի ձեռս աւազակաց, որք մերկացուցին զնա, և վէրս ի վերայ եդին, թողին կիսամահ և գնացին: Դէպ եղեւ քահանայի միոջ իջանիլ ընդ նոյն ճանապարհ, և տեսեալ զնա՝ զանց արտօր: Նոյնպէս և Ղետացի մի եկեալ ընդ նոյն տեղի, ետես՝ և զանց արտօր: Սամարացի ոմն ճանապարհորդեալ՝ եկն ընդ նոյն առ նովաւ, և տեսեալ զնա՝ գթացաւ: Եւ մատօւցեալ պատեաց զվէրս նորա՝ արկեալ ի վերայ ձէթ և գինի, և եղեալ ի վերայ գրաստու իւրոյ՝ ած զնա ի պանդոկ, և դարմանեաց զնա: Եւ ի վաղիւ անդր իբրև ելանէր անտի, հանեալ ետ ցպանդոկապետն երկուս դահեկանս, և ասէ, դարման տար դմա, և զոր ինչ ծախեցես ի դա, ի միւտանգամ գալստեան իմում հատուցից քեզ: Արդ՝ ո՞յ յերկոցունց ի նոցանէ թուի քեզ մերձաւոր լեալ անկելոյն ի ձեռս աւազակաց: Եւ նա ասէ. որ արար զողորմութիւն ի վերայ նորա: Ասէ ցնա Յիսուս, երթ և դու արա նոյնպէս: »

Ճշմարտութիւնը քարոզողը ոչ մի ժամանակ բարեկամ չէ ունեցել: Մարդկութեան երջանկութեան համար Գողգոթա բարձրացող Աստուածորդին անգամ բարեկամներ չունեցաւ իւր երկրաւոր կեանքի ընթացքում, որովհեաւ նա երկնքից էր խօսում—ճշմարտութիւն էր քարոզում: Բարձր դասակարգը՝ հրէից արիստակրատիան՝ փարիսեցիները, որոց սխալները նա շարունակ նկատում էր, նոցա կեզծ և ապօրինի վարմունքը քննութեան ենթարկում և մերկացնում ժողովրդի առաջ, բնականաբար չպիտի սիրէին և ոչ մի ջանք չէին խնայի իրանց դիմակը վերցնողին խորտակելու: Նրանք ամենայն միջոց գործ դրին նորա վարկը ժողովրդի առաջ կոտրելու. յետեից ընկած ամենուրեք հալծումէին, բամբասում և զրպարտում: Երբեմն փորձելու համար զանազան հարցեր էին առաջարկում, որպէս զի նորա բերնիցը մի խօսք լսեն, մատներին փաթաթեն որպէս փաստ և բամբասեն իւր ունկնդիրների առաջ: Հենց այդ տեսակներից մինը՝ մի օրինական էր, որ տեղիք տուեց ճշմարտութեան համար

Գողգոթա բարձրացող նազովրեցուն ասելու կարգացած առակս:

Մի անգամ Քրիստոսի 70 աշակերտները դարձել էին և պատմում էին թէ ինչպէս Տիրոջ անունով քժշկութիւններ էին անում: Քրիստոս հոգւով հրճւում է և փառաբանում է երկնաւոր Հօրը, որ նա իւր իմաստութիւնը այս տղաների ձեռքովն է տարածում (Ղուկաս Փ. 21.), որ նա իւր սէրը՝ այս սրտով մանուկների միջոցով է բաժանում, ուստի երանի տուեց նորանց ասելով—երանի՛ ձեր աչքերին և ականջներին, որովհետեւ դուք աեսնում և լսումէք այն, ինչ որ շատ մարգարէներ և թագաւորներ ցանկացան տեսնել և լսել, բայց չկարողացան: Փրկչի խօսքը վերաբերումէր իւր հաւատացեալներին—նա երանի էր տալիս իւր ունկնդիրներին՝ իրան սրտով հաւատացեալներին, որոց և խօստանում էր երկնքի արքայութիւնը: Մի օրինական, որը նոյնպէս ներկայ էր այս խօսակցութեան և որի կարծիքով Մովսիսի օրէնքը կատարողը միայն կարող է երկինք գնալ, իրան նկատողութիւն է համարում, ուստի և ցանկանում է Քրիստոսի կարծիքն իմանալ այդ մասին, դորա համար էլ, այս փորձական հարցն է առաջարկում ասելով: «Զի՞նչ արարից, զի զկեանս յաւիտենականս ժառանգեցից», Քրիստոսն իբրև նորան պատասխան երկրորդ հարցն առաջարկեց. «Յօրէնս զի՞նչ է գրեալ»: Խսրայէլի վարդապետ, գու որ ամենայն օր կարդում ես սուրբ Գիրքը և մեկնում ժողովըրդին, այդ մասին ի՞նչ է գրած: Օրինականը ճիշտ պատասխան տուեց. «Սիրեսցես զծէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ և զընկեր քո իբրև զանձն քո»: Դնա և այդպէս էլ արա, ասաց Քրիստոս և ոչ թէ լոկ խօսքով միայն քարոզիր, ինչպէս մինչեւ այսօր արել ես, ու կժառանգես երկնքի արքայութիւնը: Օրինականին ծանը էր բազմութեան առաջ յաղթուած երեալ, սկսեց իրան չհասկանալու տալ և նոր հարց առաջարկեց ասելով. «Եւ ով է իմ ընկերը»: Ես չգիտեմ թէ իմ ընկերն ով է, որ նորան սիրեմ և արքայութիւն գնամ, Սուրբ գրքում այս բանը պարզ չէ գրած: Այն հարցին, թէ ով է իմ ընկերը՝ Փրկչի պատասխանում է ոչ թէ համառօտ և չոր ու ցամաք խօսքերով, այլ մի ընդարձակ և իրական օրինակով, ու միքջն ստիպում է օրինականին, որ ինքն իրան պատասխանէ և

պատուխանումէ : Ահա նորա պատասխանը - «Որ արար զողոր-
մութիւն» . այսինքն նա, որը գթաց, ողորմաց իւր նմանին՝ իւր
ընկերին : Բայց ովէլ է մեր ընկերը : - Նա՝ որ օգնութեան կարօտ
է՝ առանց բայցառութեան . նա՝ որը ճանապարհի վերայ ընկած
է և որի մօտով մենք անցնում ենք ու հեռանում : Այս հարցն
ուշադրութեան արժանի է և արժէ սորա վերայ մասնաւո-
րապէս խօսիլ, ուրիմն քննենք նախ՝ «Հ է մէր ընէւը», մէջաւորը և
երիբարը՝ «Ին է ծմարէտ ընէւրական «Եւը», «Եսի մեն+ պէտի «Գնէն+» :

Ո՞Վ է ՄԵՐ ԸՆԿԵՐԸ՝ ՄԵՐՉԱՒՈՐԸ :

Արդեօք յայտնի է ձեզ, թէ ոչ, քրիստոնեայ եղբայրներ,
որ քրիստոնէութիւնը առաջնոր գտաւ այս հարցի պատասխա-
նը . նախ քան զ՞րիստոս՝ գրեթէ բոլոր մարդկութիւնը՝ ամբողջ
հեթանոսական աշխարհը համոզուած էր, որ սիրել կարելի է
միոյն իւրայիններին, միւսներին ոչ թէ չպիտի սիրել, այլ և
ատել : Նոյն իսկ հրէութիւնը շատ հեռի չէր հեթանոս տարրի
հաօկացողութիւնից : Քրիստոնէութիւնն առաջինը էր, այո՛,
որ մարդոց մտքերը հաշտեցրեց օտարներին ևս սիրելու և մին-
չեւ անգամ թշնամուն : Քրիստոնէութիւնն էր այս առապալ-
ներ հարթողը, լեռներ խոնարհեցնողը : Քրիստոնէութիւնն էր,
որ խորտակեց, քանդեց այն անջրպետը և աստուածային պատ-
կեր կրող Էակներին մօտեցրեց միմեանց և գոշեց հերոսաբար-
դուք ամենքդ էլ մի էք, միենոյն Աստուծոյ որդիք, եղբարք
միմեանց, «իք խորի ոչ հրէի և ոչ հեթանոսի չկայ
հրէայ և հեթանոս, ծառայ և տէր, ստրուկ և ազատ, գուք
ամենքդ էլ կրում էք ձեր երեսին երկնաւոր հօր դրօշմը, ա-
մենքդ էլ եղբայրներ էք, հաւասար էք :

Թէև հրէաներին վաղուց յայտնի էր «սիրեսցես զընկեր քո
իրեւ զանձն քո», թէև սա շատ հին խօսք էր և գրուած էր
Մովսիսի Ա. գլուի ԺԹ. գլուի 18 տողի մէջ, բայց և այնպէս
Քրկիյն իրաւունք ունէր Յովհաննու բերանով ասելու «Պատուի-
րան նոր տամ ձեզ, զի սիրեսցիք զմիմանս, որպէս ես ձեզ» :
Այո՛, սա նոր պատուիրան էր, որովհետեւ լոկ խօս+ չէր միոյն
շատ հնոյն, այլ կամք, գուծ+ էր պարունակում իւր մէջ : Այս
գաղափարը նախքան զ՞րիստոս մէաւալ դառ էր, գրքերի մէջ

միայն գրւում և կարգացւումէր։ բայց սորս Գործադրութիւնը քրիստոնէութեանն ենք պարտական, քրիստոնէութեան հիմնադիր մեր Տէր Յիսուս Քրիստոս կենդանի օրինակով ցոյց տուեց աշխարհին, թէ կարելի է այդ և պէտք է։ Սա նոր օրէնք, նոր պատուիրատն է, որովհետեւ միւսների նման արդաւին չւ չէ, այլ ներին իրազութիւն, որտեղից բջիռում են, սկիզբն հն առնում բոլոր բարի ցանկութիւնները, ազնիւ կամեցողութիւնները։ Նա լոդ է ճշմարիտ բարոյականութեան և պայման, որով ամենայն յանցանք ներւում է։ Նա նոր է և կատարեալ, որովհետեւ իւր մէջ սէր է պարունակում Վրումն օրինաց սէր է։ Նա նոր է վերջապէս իւր գործագրութեան և տարածման կողմից—այս սէրը մի անհատի չէ վերաբերում։ այլ ամենի։ Ահա հենց այս կէտն է, գէպի որը Փրկիչը կամենում է առաջնորդել օրինականին՝ իւր այս պարզ, կենդանի և կեանքի մէջ ամենից յաճախ պատահող ժողովրդական առակի միջնորդութեամբ։

«Եւ ով է իմ ընկեր», Այս գաղափարի մասին հրէաները շատ սահմանափակ հասկացողութիւն ունեին—հրէի ընկերը իւր հաւատակիցը, իւր ազգի որդին՝ հրէան էր միայն։ Հարեան հեթանոս Փղշտացին, Քանանացին, Մադիամացին, Եղոմացին, Ամաղէկոտին, և Մոլնացին և Ամովիչտացին բոլորն էլ համարւում էին Աստուծոյ թշնամի, ուստի և ոչ բարեկամ ընորեալ ազգի։ Նրէից կարծիքն, այս սահմանափակ էր ընկերի՝ մերձաւորի սիրոյ վերաբերութեամբ—նրանք իրանց համարում էին բոլոր ազգերի մէջ Աստուծոյ ընարեալ։ բարեպաշտ ժողովուրդ, «ազգ սեպհական», Եհովայի ճշմարիտ ծառաներ, իրանց հետու էին պահում, խորշում էին հարեան ազգերից, նրանց անաստուած էին համարում, ուստի և երկնային պատժի արժանի։ Այսպէս Քրիստոսի ժամանակ հրէաներն այն կարծիքի էին, որ ընկերին միայն պիտի սիրել, իսկ թշնամուն ատել, որի դէմ և մարտըն չում Քրիստոս ատելով։ «Բայց ես ասեմ ձեզ, սիրեցէք զիշնամի» ձեր, բարի արարէք ատելեաց ձերոց»։ Դարու գիտութեան զեկավար յոյնն անգամ ոչնչով չէր տարբերում այս կուլմից։ Նորհակալ եմ քեզանից ով երկնք, այսպէս խօսեց միանգամ։ նոցա իմաստունը, որ ես որպէս մարդ և ոչ որպէս կենդանի, այսինքն յայն կամ բարբարոս եմ ծնել։ Ենչպէս որ հրէի համար անհաւագր, այսպէս և յոյնի համար արէտը, ան-

Ապրիլացածը, ճաշակ լունեցողը արհամարհանքի արժանի էր — անարժան սիրոյ՝ կարեկցութեան:

Բայց ո՞չ մեր ընկերը՝ մերձաւորը ըստ քրիստոնէութեան վարդապետութեան։ Հարցը երկուսի պէտք է բաժանել — ո՞վ է ընկերի՝ մերձաւորի սիրուն կարօտ և ո՞վ պէտք է ցոյց տայ ընկերի սէրը։

Ո՞վ է ԸՆԿԵՐԻ ՄԵՐՉԱՒՈՐԻ ՍԻՐՈՒՆ ԿԱՐՈՏ։

Մեր առակի մէջ նա, որը Երուսաղէմից Երիքով էր գնում և աւազակների ձեռքն ընկաւ։ Սորանից աւելի մենք ոչինչ չգիտենք նորա մասին։ Արդեօք նա ի՞նչ աղքութեան էր պատիսնում կամ ի՞նչ կոչումն ունէր, բարեպաշտ ոմն էր, թէ մեղաւոր, ուսեալ, թէ անկիրթ, ականաւոր ոմն, թէ գուեհիկ՝ նոյնպէս ոչինչ չգիտենք։ Արդեօք օգնութեան արժանի էր, թէ ոյ, մենք այդ ևո չգիտենք և լովտէ էլ գիտենան, այդ հարցով չպիտի երբէք հետաքրքրուենք։ Հենց դորա համար էլ Փրկիչն ասում է «այր մի», մէկ մարդ, Մեր բոլոր առաջարկած հարցերին նա մէ պատասխան է միայն տալի — մէկ մարդ՝ ոչ թէ ծանօթ, այլ բոլորովին անծանօթ։ Նա ընկած է փոշու մէջ հաղիւ կարելի է նկատել, որ նա կրում է իւր դէմքի վերայ մարդկային պատկեր։ Նա մի մարդ էր, որը կրում էր աստուածային կնիք իւր դէմքի վերայ։ Նա ևս մեր եղբայրներից մինն էր։ Այո նա մի մարդ էր, որն ընկել էր աւազակների ձեռքը — իւր հարազատ եղբայրները՝ իւր ազգի որդիքը յարձակուել էին նորա վերայ կողոպտել, մերկացրել, վիրաւորել, կիսակենդան թողել և գնացել։ Վիրաւորեսլը Երուսաղէմից Երիքով էր գնում։ Այր տարածութիւնն անապատ էր, հարուստ այրերով և իւրնային ծածուկ ապառարաններով, այս տարածութեան մէջ ի՞նչ եղեռնական գործողութիւն ասես, որ չէր կատարուիլ։ Անթիւ անմեղների արիւն թափվել էր նորա իւրաքանչիւր քայլափոխում, ամեն մի անկիւն վկայ էր անթիւ չարտգործութեանց։ Աւսոի և ժողովուրդն իրաւամբ անուանում էր նորան արէան անապատ, արէան ճանապարհ, արէան պաղստայ։

Բայց մի՞թէ այս արեան ճանապարհը Երիքովի և Երուսաղէմի

մէջն է միայն։ Արդեօք սա աշխարհի ճանապարհը չէ, այդ միւնոյն վատանգը ամենիս էլ չէ պատահում։ Նայենք ուշտրութեամբ մեր շուրջը՝ քանի քանի վիրաւորութեաներ ընկած են աշխարհիս այդ ամայի տարածութեան վերայ։ Արդեօք մենք մարդիկս չենք, որ յարձակուումենք իրար վերայ, վիրաւորում կիսակենդան թողնում և հեռանում։ Գիտէք թէ քանի քունիսը ընկնում են վիրաւորուած և պառկած են այդ արիւնոտ փոշու մէջ և անօգնական մնում։ Բայց գիտէք ինչո՞ւ։ Որովհետեւ մեզնից ոչ ոք չէ մերձենում նրանց և օգնութեան ձեռն կառկաւում և եթէ մերձենում է, սաւնասրութեամբ տեսնում և հեռանում է քահանայի և զետացու նման, որովհետեւ ոչ ոք մարդասիրութիւն չէ ցոյց տալիս մարդկային անգըթութեան դէմ, որովհետեւ մեր աչքը անբաղդներին աեսնելու սովորութիւն չունի, որովհետեւ մեր սրտի զգացման լուրերը այնքան ժանգոտել են, որ թշուառի կողկողանքի առաջին հնչում, որովհետեւ մենք կարիք չունեցողներս, վայելչութիւն վայելողներս երբէք մեզ, ինք դնում նոյն վիճակի մէջ։ Զնայելով այս բոլորը տեսնումենք, չնայելովոր մեր նմանները վիրաւորուած՝ ընկած են և նոքա մեր ընկերներն են, մարդիկ, օգնութեան կարօտներ, այնուամենայնիւ մենք անցնում և գընում ենք։

Բայց գնանք յառաջ—

Ո՞վ Պէտք է ՑՈՅՑ ՏՈՅՑ ԸՆԿԵՐԻ ՍԵՐԸ,

Պատասխանն է—«որ առնէ (արար) զողորմութիւն», ով ոք կգթայ, կողորմայ։ Դա քահանան չէ, դա զետացին չէ, դա սամարացին է։ Քահանան և զետացին չեն, որոնք Երիքովից գընում էին Երուսալէմ Աստուծոյ տաճարի մէջ սուրբ պարտականութիւն կատարելու՝ տաճարին ծառայելու համար։ Նոցա պաշտօնը սահմանափակ էր—նրանք Սրբութեան մէջ պիտի աղօթէին, զոհ մատուցանէին Բարձրելոյն։ Նոցա ծառայութիւնը մի արտաքին ծիսակատարութիւն էր՝ ցելենանիս։ Նոցա զոհաբերութիւնը սրտի զոհաբերութիւն չէր, նոցա աղօթքը ի սրտէ, ի ներքուստ վերանալ չէր առ Աստուծած, նոցա բարեկալաշտու-

թիւնը սիրոյ հետ կապ յունէր—նոցա Սրբութիւն Սրբոցը շատ հեռի էր բարոյական աշխարհից:

Եթէ անկեալը Երուսաղէմի փողոցներում լինէր, ուրմարդիկ նրանց արարմունքը տեսնէին, գովէին և փառաբանէին, անշուշտ ուշք կըդարձնէին նորա վերայ, բայց այս աճայի տարածութեան մէջ ովէ է տեսնում նրանց գործքը, ովէպիտի գովէ նրանց արարքը: —Ոչ ոք, ուստի և հեռանում են: Քահանայի վարմունքը ոչնչով չէ զանազանուում աւազակների վարմունքից, նոքա ևս միւնոյն մարդիկն են՝ նոյն աւազակները—նոքա վիրաւորեցին անցան, թույին գնացին որ մեռնէ, իսկ սա ողնում, հեռանում է, որ պէտք է մեռնէ, երկուսի գործողութեան հետեանքն էլ միւնոյն է: Քահանայի յանցանքն աւելի ծանրանում է, երբ յիշելու լինիք, որ նրանք միւնոյն ժամանակ բրժիշկներ էին: Այս այն քահանան է, որ ամենայն օր տաճարի մէջ բացատրում էր ժողովրդին: «Սիրեացես զծէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ . . . և զընկեր քո իրբե զանձն քուն, բայց այսօր երբ հարցը գործադրութեանն է հասել, նորան անծանօթ երկիր է մնում Սուրբ Գիրքը: Այս այն զեաացին է, որի պաշտօնը նոյնպէս ծառայել էր տաճարում: որոնք ամենայն օր լսում էին քահանայից նոյն սիրեացես զընկեր քուն, բայց այսօր երբ հարցը գործադրութեան է եկել, նա լուռ է, նորա ականջները կարծես ոչինչ լսած յլինին: Ահա սա է քահանայի և զետացու կրօնը, որը ոչ թէ միայն հրէի կամ քահանոյական դասի մէջ պէտք է որոնել: այլ ամենուրեք նոյնը կրկնւում է և այսօր հազարաւոր մարդոց վերաբերութեամբ, որոնք բարեպաշտութիւնը լոկ արդեալին ծիսակատարութեան, երգեցովութեան, պահեցողութեան, ժամ գնալու, քարոզ լոելու և այսպիսի արտաքին բաների մէջ են փնտուում և ոչ ներքին զգացման: Ըրբթունքով ազօթելը ևս յեմ կարող լսել, քո դէմքը, քո երեսը ևս չեմ կարող տեսնել իմ որբութեան մէջ, քո արտասուքներն ի զուր են, քո հաւատոն է ինձ հարկաւոր, քո սիրտն է ինձ պէտք: «Ճնուր ցիս որդեակ զսիրտ քո . . . » առել է Աստուած իմաստունի բերանով: Փրկիչն էլ հենց այս հաւատը, այս սիրտն էր ալահանջում երկնքի արքայութիւն գնալու համար, Այս եկայք առիս ամենայն օրհնեալք հօր իմոյ . . . , սոված էի, հաց տուիք, ծարաւի էի արբույիք, մերկ էի, զգեցուցիք, օտար էի,

տեսութեան եկաք, բանտումն էի միախմարեցիք, որովհետև
որ այս փոքրիկներից մինչին արիք, ինձ արիք։ Արդեօք այս տի-
պը ողորմած Սամարացունը չէ։

Բայց ինչու Փրկիչյ Սամարացու պատկերն է ընտրում։—
Որովհետև նա քահան սիր և Նետացու լիակատար հակապատ-
կերն է։ Սամարացիներն արհամարհուած էին ուղղափառ՝ օր-
թողոքս հրէաներից, որոնք պարծենում էին իրանց ծագմամբ
և հաւատով, նրանք արհամարհում էին սամարացիներին,
որպէս խառնակեց ժողովուրդ, որը սերուել է Ասորեստանից
եկած հեթանոս տաղրից և Խորայէլի թագաւորութեան մնա-
ցարդներից։ Նրանք արհամարհում էին սրանց, որովհետև վեր-
ջինները տարբերուած էին իրանց սովորութիւններով մոլեռանդ
հրէաներից։ Սամարացիները Երուսաղէմի տաճարում ազօթե-
լու իրաւունք չունէին, այն տաճարում, որի կառու շանող Աս-
տուծուն ամելով, եթէ օդաղնէլն այստեղ ազօթելու գան, նը-
րանց ևս լսիր, ուստի Գարիզին լերան վերայ իրանց համար ա-
ռանձին ազօթատուն շինեցին։ Մոլեռանդ հրէան երբ Գալիիհա-
րից Հրէաստան ուխտ էր գալի, Սամարիայի վերայով չէր անց-
նում, այլ ճանապարհը երկու անգամ երկարացնելով պըտ-
ում էր Պերէան՝ Յայնկոյս Յորդանանը, որպէս զի պղծուած
լինի Սամարացու հողի վերայ ոտք դնելով։

Փրկիչն այօ, գիտմամբ Սամարացու պատկերն է ընտրում որ-
պէս օրինակ և այս առաջին անգամը չէ, որ նա ապտակում է
իւր մոլեռանդ հայրենակիցներին։ Յակովի ծրհորի վերայ ևս
Սամարացի կնոջը ներկայացնում է մեզ որպէս փրկութիւն տա-
նող ոմն։ Տասն բորոտների մէջ միայն Սամարացին դժորձաւ և իւր
երախտագիտութեան զգացմունքը իրան բժշկող Քրիստոսին
յայտնեց, միւս ինն բորոտ հրէաները պարտք չհամարեցին ե-
րախտագէտ լինելու իրանց հայրենակցին։ Բայց ի՞նչ է ուզում
ասել Փրկիչը ողորմած Սամարացու բերանով։ Նա ուզում է
գէմ յանդիման կացուցանել քահանայի քարասիրո վարմունքը,
և սամարացու մարդկային ողորմածութիւնը և նա վճռում է
հարցն այսպէս—ով որ ընկերի՝ մերձաւորի սիրոյ կանոնը կատա-
րել է, նա է ընկերը, նա է սամարացին, նա միայն կարող է մրտ-
նել երկնքի արքայութիւնը։ Այո՛, այդպիսին միայն կարող է

մոնել երկնքի արքայութիւնը և սա մի նշանաւոր իոռք է: Այստեղ հարցը նորանում չէ, թէ ինչպիսի համօզումն ունիս, ի՞նչ կոմ ի՞նչպէս ես մոտածում: Խնդիրը գործողութեան մէջն է, գործունեայ սէր է հարկաւոր մեզ: Հարցը նորանում չէ: թէ օրական քանի անգամ յաճախում ենք եկեղեցի կոմ Երիքովից Երուսաղէմ ենք գնում Աստուծոյ տաճարը ազօթելու համար, այլ նորանում, թէ ի՞նչ զգացմունքով, ի՞նչ սրտով, կայ արդեօք մեր մէջ մարդկային ազնիւ զգացմունք, ողորմած Սամարացու սիրտն ունի՞նք: Միայն նրանք կարող են երկնքի արքայութիւն մոնել, որոնք բոլոր ժամանակի և բոլոր ազգութեանց համար սամարացիներ կարող են լինել: Կամ շատերը, որոնք հրապարակական ալօթքին մասնակցելու միջնցներից զուրկ են, սակայն առանց աղմուկ բարձրացնելու, առանց փող փչելու հրապարակներում և կամ քահանայի նման կանոնաւոր աահար գալու, հանգիստ և լրելեայն կատարում են իրանց պարտքը, այնպէս որ աջը չգիտէ, թէ ձախն ի՞նչ է գործում:

Քննենք մի անգամ էլ մեր գործքերը, մեր արարմունքները և առդեօք ըստ սամարացու, թէ ըստ քահանայի և զետացու ենք վարւում: Կան շատերը, որոնք նորանով են արդարանում թէ աշխարհումս անկեալներ և կարօտեալներ շատ կան, մեզանից իւրաքանչիւրը եթէ իւր ազգականների կամ բարեկամների վերաբերութեամբ իւր պարտքը կատարել է, ուրիմն և ազատ է արդեօք ու արդարանալու միջոց է: արդեօք սորանով մենք մեր մարդկային պարտքը կատարեցի՞նք, և կամ եթէ մեր գուռը բաղնող մուրացկանին պատառ հաց տուինք ու հեռացրինք, որ մեր հանգստութիւնը չխանգարէ կամ այս ի՞նչ ու այն ի՞նչ ընկերութեան, հաստատութեան այսքան և այնքան վճարեցինք՝ սորա, նորա ինդիրքով և շատ այստեսակ մեքենական բարեգործութիւններ՝ մենք ազատ ենք բարոյապէս: Ո՞չ, սիրելիք, ողորմած սամարացու սէր է հարկաւոր: Թէև գովելի են այս գործերը: բայց սորանով չպիտի արենք, թէ բոլորն էլ կատարել, վերջացրել ենք: Ողորմած սամարացիութիւնը չի բաւականանում միայն տուրքերով, նացա տեսակով և քանակով, այլ նա պահանջում է, որ տուտղը սրտամնց տայ, տուղի ներ-

քինից բղիսէ։ Ողորմած սամարացիութիւնը նպատակ չի դնում հեռաւոր և անձանօթ անկիւններում իւր գոյութիւնը հռչակել տալ, այլ անշատք տեսնել անքաղղին և տեսնել և զգալ նորա հետ և ոչ նորա համար։ Ողորմած սամարացիութիւնը չէ բառականանում փողով, նիւթականով միայն առաջն լնկածին օգնել, ձեռն կառկառել, ձէթ դնել և գինի արբուցանել, այլ և իւր շուրջն եղած հոգեկան, բարոյական ապականութիւնքը, թշուառութիւնքը և սամքրել, սրբել—այս, օգնել նրանց, որոնք ընկած են անքարոյականութեան փոշու տակ, որոնք բռնի կերպով նետուած են հասարակաց հրապարակի վերայ, որոնք միայնակ անկարող են վերականգնել իրանց, որոնք թերեւս թեթևամտութեամբ իրանց այստեղն են հասցրել, որոնք անշուշտ մեղ կանչելիս կլինին—օգնեցէք, ձեռն կառկառեցէք, հանէք մեղ այս փոշուց, տարէք մեղ հասարակաց այդ ճանապարհից գէպի պանդոկը, մենք դարձեալ կարող ենք պիտանի անդամներ դառնալ շուշտ, շուշտ, ապա թէ ոչ ուշ կլինի։ Անշուշտ մենք ամենքս էլ այս ձայները, այս աղերսները լսել ենք, բայց քանի քանիսը մեզանից իջաւ իւր գրաստից և լստ սամարացու վարուեց, նթէ չասեմ ոչ ոք, գոնէ շատ քիչերը—լավտեր առնելու և փնտռելու է, բայց յգիտեմ կգտնենք թէ ոչ։ Մենք ամենքս էլ այս բոլորը տեսել ենք, բայց հեռացել և գնացել։ Պատահել է երբեմն էլ նայել ենք անկեալին, տիրել, մինչեւ անգամ արտասուել, բայց թիկունքներս շարժել և դարձեալ անցել, գնացել, թերեւս մենք չենք կարողացել օգնել։ — Թերեւս կարողանայինք, եթէ կամենայինք։ Արդարեւ խսկական ողորմած սամարացի դառնալը գժուար է։ Միայն քարասրտութիւնը չէ արգելքը և հարստութիւնը քաղցր մամնայի հետ միասին, որ չէ թողնում մեղ մերձենու կարօտեալին։ Մենք ամենքս էլ այդպէս ենք։ Ոչ ոք չի ուղում իւր հանգստութիւնը խանգարել, իւր խաղաղութիւնը վրդովիել։ Անվրդով, հանգիստ լինելու զգացումն է, որ մեղ սառնասրտութսամբ տանում և անց է կացնում՝ անկեալի մօտով։ Անբաղդ լինելը լաւ բան չէ, կարեաց մէջ ընկնելը նոյնպէս, շատերի նեարդերն այն աստիճան զգայուն են, որ նրանք անքաղցութեան տգեղ գէմքը չեն կարող տեսնել, Այս մենք յենք ինայում մեր կոպեկները, բայց մենք մոռանում ենք մեր հանգստութեան զոհը մատուցանելու։

Այսպէս, սիրելիք, եկէք ողորմած սամարացուց սովորենք ընկերին՝ մերձաւորին սիրելու ուղիղ եղանակը։ Ո՞րն է այդ։— Նա՛ ով օգնում է առանց խնդրելու։ Սամարացին տեսնում է անկեալին փոշու մէջ ընկած, գունատուած, վհատուած, մահուան դալուկը երեսին խփած, ցաւի խստութիւնից խօսելու, խնդրելու կարողութիւն չունի, նորա հառաջանքը, նորա հազիւ նկատելի հոգւոցը սամարացու աշքին է ընկնում, կանգ է առնում։ Նա ունի չէ հարցուած լաւ նկատեցէք, սամարացին ոչինչ հարց չէ տալի իրան թէ փոշու տակ ընկնողն ո՞ւ է, բնչպէս է նա այդ անբաղդութեան մէջ ընկել, արդեօք իւր թեթեամտութեամբը, թէ անզգուշութիւնն է իրան այստեղ հասցրել։ Առակի մէջ ասած է. «Եւ տեսեալ զնա, գթացաւ և մատուցեալ պատեաց զվէրս նորա», Ճշմարիտ ընկերական ոէրը հայ չէ ուսում, թէ ճանապարհի վերայ ընկնողը օգնութեան արժանի է թէ ոչ, արդեօք ինչ յանցանք է գործել և որքան մեծ է։ Բայց ով է արժանաւորը և ով յանցանք չունի, նա այսքան է միայն հարցնում—անկեալը կարիք ունի, նա նեղութեան մէջ է, պէտք է օգնել։ Նա զգում է անկեալի նման և ահա այստեղից ծնում է նորա մէջ կարեկցութեան զգացումն, որը չի կարող սառնասիրտ լինել և ականատես, այլ պատում է նա նորա կուրծքը և դուրս թռչում—սամարացին իսկոյն իջնում է գրաստից և փաթաթում է նորա արիւնոտ վէրքը։ Նա հեռուն չէ մոտածում։ Ամենայն ինչ լռում է, ամենայն ինչ մոռանում է—ժամանակի սղութիւնը, իւր գործքը, ապագայ նեղութիւնքը, վտանգն անապատի մէջ, ոյդ սոլորը, բոլորը մոռանում է նա։ Մէ մտածմունք միայն տիրապետել է նորա հոգին, մի միտք միայն զբաղեցնում է նորան—պէտք է օգնել նորան, բոլուն թանկ է, ամենայն մի վայրկեան ուշացնելը մահ է սպառնում անկեալին, Այստեղ քո առաջը մարդու կեանք է դրած, Սամարացին էին-ու չէ իրում։ Անապատ, անմարդաբնակ վայր, ոչինչ օգնութեան վերայ յոյս դնել չի կարելի—նա կարող էր նոյնպիսի աւազակների ձեռք ընկնիլ, կարող էր մեղադրուիլ։ Սամարացու օգնութիւնը հինգական է—նա չէ օգնում խօսքով, միխիթարելով, յոյս տալով կամ ցաւակցութիւն յայտնելով, Երբեմն այս խօսքն էլ գործի հաւասար է։ Այս, մի խօսքը երբեմըն վհատեալին այնպիսի ոգի է ներշնչում, բնչպէս ամառան

Ճերմ երեկոյները երկնառաք ցողը. Հոգեկան ցող—սա միսիթա-
րութեան ձէթն է, բայց գործքը խօսքից անբաժան պիտի լինի,
սա ոգի ներշնչող գինին է, սա ամենամեծ բարիքն է, որ մարդու
տալ կարող է: Ո՞վ վերքի կակիծն այսպէս մեղմել կարող է, նա-
չի գանդաղիլ կանդ առնել, անկերպին փոշուց վերցնել, գրաս-
տի վերայ դնել և հոգալ նորա պապագայի մասին: Սամարացին
օգնութէ մինչև վերջին կտրը, թերի ոչինչ չէ թողնում: Արդեօք այդ-
հանգամսնկների մէջ նա ի՞նչ կարող էր անել և չէ արել: Ոչինչ,
նա ամենայն ինչ արել է: Հետեւեալ օրը, երբ սամարացին պէտք
է զնար, հանդիպում է պանդոկապետին մի անգամ ևս, տա-
լիս է նորան՝ ճանապարհին գործածելու համար վերցրած իւր-
երկու գրամը, երկու գահչեկանը և ասում է «Դարման տար դժա-
և զոր ինչ ծախեսցես ի դա, ի միւսանգամ գալստեան իմում
հատուցից քեզ»: Նա չի բաւականանում նորանով, որ անկեա-
լին փրկում է վտանգից և տեղ հասցնում, այլ նա հոգում է
և նորա ապագայի վերայ՝ մինչև որ նա կատարելապէս կառող-
ջանայ և կարող կլինի իւր ճանապարհը շարունակել իւր սեպ-
հական ոյժերով: Սամարացին չէ հանգստանում մինչև որ իւր
սկսած սիրոյ գործը կատարելապէս չի վերջացնում, Սամարա-
ցին օգնում է նորան առանց անհայտ-նետն նա հեռանում է և
շարունակում իւր ճանապարհը առանց հրաժարականն առնե-
լու, որպէս զի շնորհակալութիւն անգամ չստանայ նորանից:

Քրիստոնեայ եղբայրներ, գիտէք ո՞վ է այս սամարացին, բա-
ռիս քուն նշանակութեամբ: — Տէրն մեր Յիսուս Քրիստոսս, նա
է ամբողջ մարդկութեան Սամարացին: Աղամից սկսած մինչև
Քրիստոս ամբողջ մարդկութիւնը շաղախուած էր յանցանքի
մէջ, իստարբ պատել էր նորանց սիրտը, ամենքն էլ նստած էին
նորա ստուերի տակ, ոչ ոք չգիտէր: Թէ ի՞նչ պիտի անէ — ա-
յո՛, աշխարհն նորից աներեւ ոյժ և անպատրաստ էր դաւել,
ուստի Աստուած միանգամ էլ առաց եղիցի կըսար ու եղաւ —
նա ուղարկեց իւր Միածին Որդուն որն իջաւ երկնքից մարդոց
վերքեր փաթաթելու: Նա մեզ հասարակաց ճանապարհի վերա-
յից գէպի խաղաղութեան ապաստանարանը՝ պանդոկը՝ եկեղե-
ցին, տուեց մեզ այստեղ իւր անանցանելի գանձը՝ Աւետարանը,

իւր հոգւ ոյ զօրութիւնքը, "ո՞ մեղ ամենիս առաջնորդում և պաշտպանում է: Բայց ի՞նչ է ասած մեր պատմութեան վերջում: «Երթ և դու արտ նոյնպէս»: Այս խօսքը մեղ համար ևս ասած է — մենք ևս այդպէս պիտի անենք: Մի ասէք թէ մեղ յեն հանդիպում աւազակների ձեռքն ընկածներ, որ օգնենք: Նայենք մեր շուրջը, ամեն ուրեք կգոնենք այդպիսիք: Մի գարձրէք ձեր երեսները այդպիսիներից, մի հեռացէք ստունասրութեամբ և մի թողէք այդպիսեաց վշտի մէջ: Մի բաւականացէք նորանով և մի մոխթարեցէք ձեղ թէ ժամանակ, կարողութիւն և առիթ շունինք օգնելու, մի ասէք թէ մենք մեր մերձաւորներն ունինք, մեր ընտանիքը, մեր ազգականները, մեր հաստրակութիւնը : Մեր մերձաւորը թող նալինի, ով աչքերն արցունքով լիւն ասում է, ազատիր ինձ, փըրկիր լիւն: ամէն:

Ցիկիս.

ՍԱՀԱԿ ՔԱՀ. ՍԱՀԱԿԵԱՆՑ.

ՊԱՏՄԱԿԱՆ

ՎԵՐԱԽՆԱԿԻԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ^{*)}

Այն օրից, երբ Հայաստանը վերջնականապէս կորցրեց իւր քաղաքական անկախութիւնը, լդադարեցան շարունակ նորա միջից հայրենի և ազգութեան համար եղած մշտատանջ և գարեւոր պատերազմները:

Բնական էր, ուրեմն, որ այդ ստկաւաթիւ ազգը գեգերուած և նեղուած իւր շրջակայ անհամար մահմետական ցեղերի ձեռքին, զգար և խոստովանէր, թէ անհրաժեշտ է իւրեան կապել իւր գյուղաթիւնը մի քրիստոնեայ հզօր ազգութեան կեանքի հետ:

(*) Կովկասեան պատերազմ. հեղինակութիւն Վ. Պատաշի, Հատոր Գ. Պարսկական պատերազմ 1826—28 թ. դիւք Ս. Պետեր. 1882 ամ.